

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

ՈՐՈՇՈՒՄ N 33/2

ք.Երևան

15 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 16.05.2018թ. N4200214 արձանագրության դեմ Արամ Գրիգորյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Արամ Գրիգորյանի կողմից դիմում-բողոք է բերվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 16.05.2018թ. N4200214 արձանագրության դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը բերել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձը:

Քննարկվող դեպքում դիմում-բողոքը վերաբերվում է «ԷՅՁ-ՔՈՆ» ՍՊԸ-ի նկատմամբ կազմված ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 16.05.2018թ. N4200214 արձանագրությանը, սակայն դիմում-բողոքը բերվել է դիմում-բողոք բերելու իրավասություն չունեցող անձի՝ Արամ Գրիգորյանի կողմից: Մասնավորապես, դիմում-բողոքին կից ներկայացված չէ Արամ Գրիգորյանը «ԷՅՁ-ՔՈՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հանդիսանալու մասին ապացույցը (լիազորագիրը):

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արամ Գրիգորյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Դ.ԱՆԱՆՅԱՆ

